ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ» ԵՐԿՈՒՄ ԱՌԿԱ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էլլա Սարիբեկյան

Հոբի գրքի լուծմունքը Գրիգոր Տաթևացու կոթողային գործերից է: Այս երկը նա գրել է Մեծոփա վանքում դասավանդելիս (1408 թ.): Մեզ է հասել ինքնագիրը (ՄՄ, ձեռ. 1115): Լուծմունքն իր մեջ բյուրեղացնում և խտացնում է նախորդ դարերի պատմական, փիլիսոփայական, աստվածաբանական միտքը: Սույն երկի ուսումնասիրությունը նոր էջ է բացում ոչ միայն Տաթևացու գրական ողջ ժառանգության ընկալման ծիրում, այլև մեզ հասած Հոբի գրքի մեկնությունների շարքում: Այն հստակ բացահայտում է Հայ Եկեղեցու դավանաբանության հիմնական դրույթները, և այս առումով պահպանում է իր այժմեականությունը: Այս անտիպ մեկնությունը ևս մեկ անգամ շեշտում է Գրիգոր Տաթևացու՝ նյութի բազմակողմանի վերլուծության, խնդիրների հստակ ձևակերպման և դրանց մեկնողական տարբեր մեթոդներով մատուցելու կարողությունները:

Գրիգոր Տաթևացու սույն երկի աստվածաբանական քննությունը բացահայտում է հեղինակի՝ Հայ Եկեղեցու դավանանքի անթերի և համակողմանի իմացությունը: Մեկնվող նյութը հեղինակի համար առիթ է դառնում անդրադառնալու Հայ Եկեղեցու դավանաբանական կարևորագույն խնդիրներին (հատկապես այն խնդիրներին, որոնք արդիական էին ԺԴ-ԺԵ դարերում), դրանց տալիս է հստակ ձևակերպում ու բացատրություն: Լուծմունքում հընթացս խոսում է դավանաբանական հիմնարար խնդիրների մասին՝ չշրջանցելով առօրյա կյանքին առնչվող հարցերը: Սույն երկի աստվածաբանական քննությունը դժվարանում է նրանով, որ դրանք համակարգված չեն, սփռված են Տաթևացու լուծմունքի էջերում: Հոբի գրքի լուծմունքը Տաթևացու համար ևս մեկ առիթ է՝ շեշտելու և ընդգծելու Աստվածաշնչի և Հայ Եկեղեցու դավանանքի ճշմարտացիությունը:

Այժմ կքննարկենք դավանաբանական խնդիրներից յուրաքանչյուրն՝ ըստ Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքում առկա ձևակերպումների:

Երրորդաբանություն: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դավանաբանական հիմքը կազմում են Տիեզերական երեք ժողովների՝ Նիկիայի (325 թ.), Կ.Պոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) դավանաբանական որոշումները: Հայ Եկեղեցու դավանանքի հետագա զարգացման և հաս-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գայանե Սիմոնյան - ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԵՎ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ 7

Նարինե Միրզոյան - ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 16

Տ.Հեթում քահանա Թարվերդյան - ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՒՄ Ե-Ը ԴԴ. 32

Էլյա Սարիբեկյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ» ԵՐԿՈՒՄ ԱՌԿԱ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 59

Արսեն Հարությունյան, Հայկ Հակոբյան - «ԵԿԵՂԵՑԻ» ԵՎ «ԽՈՐԱՆ» ԲԱՌԵԶՐԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ 87

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան - ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ 99

Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան - ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՇՈՒՐՋ 113

Նելլի Ժամկոչյան - ԷՋՄԻԱԾՆԻ V ԴԱՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ 134

Արշակ Բալյան - ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԸ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ... 146

Սարգիս Մելքոնյան - «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ/ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԸ 158

Հասմիկ Աբրահամյան - ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 177

ԿՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մկրտչյան - ՆՈՐ ՏԱՐԻ - ԱՄԱՆՈՐ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 209

Սամվել Մկրտչյան - ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴ (ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՇՐՋԱՆ) 216

Գոհար Սարգսյան - ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿՐՈՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐ -ՀԱՅԱՑՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 225

Հովհաննես Հովհաննիսյան - ՆԵՍՏՈՐԻ ՊՐՈՍՊՈՆԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎՆ ԻԲՐԵՎ ՆՐԱ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ 235

Պարգև Բարսեղյան - ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ 245

Լիզա Քարիմյան - ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԽՈԼԱՍՏԻԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ: ԱՆՍԵԼՄ ՔԵՆՏԵՐԲԵՐԱՑՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 255

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Անուշավան եպս. Ժամկոչյան, Լիլիթ Սիմոնյան - ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆԵԲՐՈՎԹԸ ԵՎ ՆԵՄՐՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 273

Անուշավան Պետրոսյան - ՔՐԴԵՐԻ, ԵԶԴԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱԶԳԱ-ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ ՎԵՊՈՒՄ» 303
Վոլոդյա Գասպարյան - ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 317

Հասմիկ Հարությունյան - ԿԻՆԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ 333

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ XVIII -XIX Դ. ՍԿԶԲՈՒՄ: ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 344
Գայանե Հակոբյան - ՀՀ ՆԵՐԳԱՂԹԱԾ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ 360
Տեղեկություններ հեղինակների մասին 374
Ի գիտություն հեղինակների 383

СОДЕРЖАНИЕ

БОГОСЛПВИЕ

Гаяне Симонян - ПРАЗДНИК РОЖДЕСТВА ХРИСТА И ДАТА РОЖДЕНИЯ 7
Нарине Мирзоян - ПРИМЕНЕНИЕ «ГИРК ДАТАСТАНИ» («СУДЕБНИКА») МХИТАРА ГОША В АРМЯНСКИХ ОБЩИНАХ 16
Иерей Хетум Тарвердян - ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ХРИСТОЛОГИЧЕСКИХ СПОРАХ V-VIII ВВ. 32
Эля Сарибекян - БОГОСЛОВСКИЕ ВОПРОСЫ В "КОММЕНТАРИИ НА КНИГУ ИОВА" ГРИГОРА ТАТЕВАЦИ 59
А. Арутюнян, А. Акопян - ОДИНАКОВОЕ ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЙ “ЦЕРКОВЬ” И “РИЗНИЦА” В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ 87

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

Ашот Манучарян - САГМОСАВАНК НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ 99
Лилит Симонян, Карен Оганисян - К ВОПРОСУ О ПРАЗДНИЧНО-ОБРЯДОВЫХ ОБЫЧАЯХ СВЯТИЛИЩ ТУХ МАНУК 113
Нелли Жамкочян - ОБ ОДНОНЕФНОМ ЦЕРКВЕ В ЭЧМИАДЗИНЕ (V ВЕК) 134
Аршак Балян - МИТРОПОЛИТ БАГДАСАР И ЕПАРХИАЛЬНАЯ ШКОЛА В ШУШИ 146
Саргис Мелконян - ВОПРОС СОБОРА В ФЕОДОСИОПОЛЬ/КАРИНЕ УПАМИНАЮЩИЙСЯ В «АРМЯНСКОЙ КНИГЕ КАНОНОВ» 158
Асмик Абраамян - КЛАССИФИКАЦИЯ МЕСТ ПАЛОМНИЧЕСТВА ВАРДАВАРА 177

ИСТОРИЯ РЕЛИГИЙ

Самвел Мкртчян - НОВЫЙ ГОД - АМАНОР (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 209
Самвел Мкртчян - РОЖДЕСТВО ХРИСТОВО (ПЕРИОД БОЛЬШЕВИЗМА) 216

տատման գործում մեծ դեր ունեն նաև Ընդհանրական Եկեղեցու և Հայ Եկեղեցու հայրերի դավանաբանական երկերը, մասնավորաբար Գրիգոր Աստվածաբանի, Գրիգոր Նյուսացու, Եփրեմ Ասորու, Բարսեղ Մեծի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Գրիգոր Լուսավորչի, Հովհան Մանդակունու, Հովհան Մայրագոմեցու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու և այլոց: Ըստ Հայ Եկեղեցու դավանանքի՝ Սուրբ Երրորդությունը՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված, միասնական մեկ Աստվածության երեք անձեր են. ոչ երեք աստվածներ, այլ մեկ Աստված՝ եռանձնյա[1]:

Հոբի գրքի լուծմունքում Գրիգոր Տաթևացին անդրադառնում է երրորդաբանական[2] հարցերի՝ Երրորդության անձերի հավասար և մեկ լինելուն[3]. «Նախքան զլինելն աշխարհի ինքն յինքեան էր և այժմ ինքն յինքեան է և ի կատարածի ինքն յինքեան եղիցի: Այս ըստ միութենէ: Երկրորդ՝ ասէ Տէրն յԱւետարանն. «Ես ի Հայր և Հայր ի յիս է» (Հովհ. Ժ 38), զի ոչ ոք լնու զՀայր՝ եթէ ոչ Որդին և անդրադարձեալ, նոյնպէս և զՀոգին իմասցիս: Այս ըստ հաւասար անձանցն է»[4]:

---

[1] «Հաւատամք ի մի Աստուած Հայր, Տէր և Արարիչ ամենայնի. և ի միածին Որդին, որ ի Հօրէ և առ Հայր և ընդ Հօր. և ի Հոգին Սուրբ, որ ի նորին էութենէ և նովաւ արար զամենայն արարածս: …Երեք կատարեալ անձինք, և մի կատարեալ կամք. անպատում, անքնին միութիւն Երրորդութեանն. մի իսկութիւն, մի բնութիւն, մի աստուածութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ», տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քնն. բնագիր՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևան, 1983, էջ 496:

[2] *Երրորդություն* եզրն առաջին անգամ օգտագործել է Թեոփիլոս Անտիոքացին (180)՝ հունարեն τριάς ձևակերպմամբ:

[3] Տաթևացու Երրորդության կատարյալ ձևակերպումը գտնում ենք «Գիրք Հարցմանց»-ում. «Ո՛չ են մեզ երեք աստուածք՝ այլ մի Աստուած եւ երեք անձինք. եւ երկուքն ի մի եւ ի նոյն էութենէն յառաջ եկեալ. կամօք մի եւ զօրութեամբ մի: Որպէս տեսանեմք ի բոլորակս արեգականն եւ մի ասեմք զարեգակն, իսկ թէ հայիմք ի լոյսն եւ ի ջերմութիւնն՝ գ (երեք) իմանամք: Այսպէս եւ Աստուածութիւն մի տեսանեմք եւ անձինք՝ երեք: …Եւ այսքան է միաւորութիւնն, զի որքան մին ինքն առ ինքն ունի զբնութիւնն եւ զզօրութիւնն եւ զկամքն, նոյնքան եւ ունի առ երկուսն. թէ զՀայր իմանաս՝ թէ զՈրդի՝ թէ զՀոգին: Այս է միաւորութեանն բան», Գիրք Հարցմանց, էջ 54:

[4] ՄՄ, ձեռ. 1115, թ. 64բ-65ա:

Ըստ Տաթևացու՝ Աստված մարդկանց հետ խոսում է հրեշտակների միջոցով, *անմարմին ձայնով*: Աստված *մտքի խոսքով*՝ խոսում է հրեշտակների և մարդկանց հոգիների հետ, *բերանի խոսքով*՝ մարդու հետ, և *գործի խոսքով*՝ սատանայի, դևի[1]: Տաթևացին բավականին հետաքրքրքրական է մեկնաբանում մարդկանց հետ Երրորդության Անձերի խոսելը: Այսպես օրինակ՝ Աստված է, որ հաղորդակցվում է Եղիփազի հետ, և հակադրվում այն մտքին, որ ոչ միայն Սուրբ Հոգին է խոսում մարդկանց հետ, այլ նաև երեք Անձերը միաժամանակ. «Այլ ասեմք, թէ Երրորդութիւնն խօսի աստ. նախ՝ զի Հայր ՝ որպէս միտք, և Որդի՝ որպէս բան և Հոգին՝ որպէս խօսք: Արդ, թէ Հայրն խօսի և թէ Որդի Հոգւովն խօսի: Դարձեալ ասեմք, թէ որպէս Հայր կրկին խօսեցաւ և Որդին այժմ կրկին խօսի, նոյնպէս և Հոգին Սուրբ»[2]: Ահա մեկ օրինակ ևս, որտեղ Սուրբ Երրորդության անձերի առանձին բնորոշումները ներկայացվում են միության մեջ. «Իմաստութիւնն Աստուծոյ և հանճար Որդին և Հոգին Սուրբ, որ է անձնաւոր գոյացութիւն կատարեալ»[3]:

Աստծո ստորոգելիները: Հայ Եկեղեցու աստվածաբանության մեջ կարևոր տեղ ունի նաև Աստծո ստորոգելիների խնդիրը: *Ստորոգելի* ասելով հասկանում ենք Աստծո նկարագրի մասին հետևություններ՝ նրա գործի կամ գործելու կերպից ներշնչված: Աստծո ստորոգելիներն աստվածաբանության մեջ բաժանվում են երկու խմբի՝ ա. ստորոգելիներ, որոնք բնութագրում են Աստծո էությունը՝ էութենական, բ. ստորոգելիներ, որոնք առնչվում են Աստծո գործին՝ գործունեական[4]:

Գրիգոր Տաթևացին աստվածաբանության մեջ ընդունված աստվածճանաչողության տարատեսակների՝ ժխտողական (ապոֆատիկ) և հաստատական (կատաֆատիկ)[5] հիմքի վրա է կառուցում Աստծուն նկարագրելու, նրա ստորոգելիների մասին իր խոսքն ու մեկնությունը: Հոբի լուծմունքում նա բազմիցս անդրադառնում է այս հարցերին: Ստորև բերվող օրինակներում բաժանումներն ըստ աստվածճանաչողության մեթոդների չենք առանձնացրել, որովհետև առաջին հայացքից էլ կարելի է դրանք

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 10բ: Տե՛ս նաև Գիրք Հարցմանց, էջ 144-145:

[2] Նույն տեղում, թ. 115բ:

[3] Նույն տեղում, թ. 40ա:

[4] Տե՛ս **Գարեգին Ա.,** Աստուածաբանութիւն, հտ. Գ, էջ 80-81:

[5] Ավելի մանրամասն տե՛ս Лосский В. Н., Боговидение, перевод с французского В. А. Рещиковой, Москва, 2003, стр. 459-464:

տարբերակել: Աստված հավիտենական է, անսկիզբ է ու անվախճան, իրենում անփոփոխ, ճշմարիտ, բարի[1], անտեսանելի, անշոշափելի զորություն է[2], անեղ է նրա իմաստութիւնը[3], իմաստությամբ և փառքով բարձր և մեծ է բոլորից, որովհետև անեղ և անսկիզբ է, վերինների համար անիմանալի է, իսկ մեզ՝ մարդկանցս համար՝ անքննելի, անտեսանելի և անճառելի է: Նա անսահմանելի է, անպարունակելի և անհաս[4], «անեղական լոյս աստուածութեան, բնակեալ ի լոյս անմատոյց»[5], իսկ մեկ այլ տեղում՝ «լոյս է Հոգին և Բանն Աստուծոյ»[6]:

Միայն Աստված է սուրբ, արդար[7], զերծ ամենայն աղտից[8], նա իր բնությամբ արդար է[9]: Շարունակելով թվարկել Աստծո ստորոգելիների այս շարքը, որն ուղղակիորեն վերաբերում է Նրա արդարությանը, Տաթևացին ներկայացնում է Աստծո արդարության չափը. Աստված ամբողջովին արդար է, հավիտենական և անփոփոխ արդար է, սկզբից էլ արդար է:

Նա ամենատես է[10], ամենքի, այսինքն՝ իր ստեղծածների թագավորն է, որոնք պարտավոր են հնազանդվել նրան և երկնչել նրանից[11]: Նա նստած է իր Աթոռին կամ Գահին և շրջապատված է սերովբեներով[12]: Աստծո աջ բազուկը ողորմություն է, իսկ ձախը՝ արդարություն[13]:

---

1 ՄՄ, ձեռ. 1115, թ. 74բ:

2 Նույն տեղում, թ. 59ա:

3 Նույն տեղում, թ. 101ա:

4 Նույն տեղում, թ. 81ա:

5 Նույն տեղում, թ. 91ա: Արևագալի ժամերգության շարականների մեջ երգվում է. «Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ ի լոյս յանմատոյց Հայր երկնաւոր ի դասուց լուսեղինացն օրհնեալ…»: (Տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ…, Վաղարշապատ, 1885, էջ 341):

6 Նույն տեղում, թ. 108բ:

7 Նույն տեղում, թ. 58բ:

8 Նույն տեղում, թ. 41ա:

9 Նույն տեղում, թ. 35ա:

10 Նույն տեղում, թ. 65ա, 35բ:

11 Նույն տեղում, թ. 113բ, 79ա:

12 ՄՄ, ձեռ. 1115, թ. 66բ:

13 Նույն տեղում, թ. 116բ:

Աստծո զորությունը և իմաստությունը Հոբի գրքի լուծմունքում Տաթևացին բացատրում է հետևյալ կերպ. «Կրկին է զորութիւնն, այսինքն՝ ի ներքս առ Աստուած՝ անձն է և գոյացութիւն, իսկ արտաքս՝ ներգործութիւն է զորութիւնն Աստուծոյ, նոյնպէս իմաստութիւնն անձնաւոր գոյացութիւն և ի մեզ հասեալ իմաստութեանն ներգործութիւն: Այսպէս Բանն Աստուծոյ էութիւն անձնաւոր և առ մեզ հրամանն Աստուծոյ և ներգործութիւն Բանին»[1]: Աստծո զորությունը երկու ձևով է արտահայտվում. «…արարչական և արքունական, և է արարչութեանն զոչէից առնել և զեղեալն խնամել, և արքունականն՝ տիրել և դատել»[2]: Աստծո գործը ևս երկուսի է բաժանում՝ ողորմություն և արդարություն գործել, Աստված ողորմությամբ արարեց աշխարհը, իսկ արդարությամբ խնամում է ու դատում: Ըստ Տաթևացու՝ Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձ ունի աստվածային գործի (*արարել, խնամել, դատել)* կատարման իր *պաշտոն*-ը՝ «առնելն՝ Հօր, խնամել՝ Հոգւոյն և դատելն՝ Որդւոյ»[3]: «Ամառան» հատորում հանդիպում ենք մի փոքր այլ ձևակերպման[4]: Հոբի լուծմունքում այս բոլոր ստորոգելիները գտնում ենք տարբեր էջերում, սակայն ավելի համակարգված և ամբողջացված գիտելիքներ ենք քաղում «Գիրք Հարցմանց»-ից[5]:

Քրիստոսաբանություն: Որդին Աստուած է. «Քրիստոս Որդի էր Աստուծոյ», «աստուածութեամբ օծեալ»[6], որ մարդկանց սրտերը հերկեց Ավետարանով, սերմանեց աստվածային Խոսքը և արդյունք ստացավ: Որդի Աստված համագոյակից է Երրորդությանը, որովհետև. «ի մէջ երից

---

[1] Նույն տեղում, թ. 58բ:

[2] Նույն տեղում, թ. 100բ:

[3] Նույն տեղում, թ. 101ա:

[4] «Այլ գործն Աստուծոյ երեք ազգէ: Առաջին՝ գործ բնութեան որպէս ստեղծանելն: Երկրորդ՝ գործ շնորհաց, որպէս խնամել զհաւատացեալս և թողութիւն շնորհել: Երրորդ՝ գործ փառաց և մեծութեան, որպէս յարութիւն մեռելոց և փառք հրեշտակաց», տե՛ս Ամառան, էջ 74:

[5] «Ստորոգութիւնս պատշաճի եղական գոյիցս իսկութեամբ, որ ի նիւթոյ և ի տեսակէ, ի գոյացութեանց և ի պատահմանց են ժողովեալ: Իսկ անեղ և պարզ էութեանն պատշաճի միայն նմանապէս համեմատութեամբ», որից հետո նա թվարկում է Աստծուն բնութագրող տասը ստորոգելիները, տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 171:

[6] ՄՄ, ձեռ. 1115, թ. 116ա:

անձանց է ծնունդ ի Հօրէ»[1]: Սա Հայ Եկեղեցու դավանանքի կարևորագույն կետերից մեկն է. Հայրն անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդյամբ, Սուրբ Հոգու՝ բխմամբ, ծնունդն ու բխումը ներբնութենական ակտեր են և ոչ թե աստվածային բնությունից դուրս ժամանակային առաջացումներ կամ միևնույն աստվածային անձի տարակերպություններ. «Որդի է ծնունդ Հօր ի սկզբանն, զի լուծումն է բանիդ յերկուց դիմաց և հաստատող էութեանն Հօր: Ասելովն ծնունդ ի Հօրէ, ցուցանէ ոչ լինիլ յառաջ, քան զՀայր: Եւ ի սկզբանն ասելով, ոչ յետոյ, քան զՀայր գոլ, այլ որքան Հայրն Հայր, նոյնքան և Որդին ընդ նմա Որդի»[2]: Քրիստոս էր աշխարհի լույսը. «միաւորեալ ի հոգի և ի մարմին երկրաւոր, որպէս անօթ արեգականն և լոյս ընդ օդ միացեալ: …Որդին Աստուծոյ իջեալ և լոյս ծագեալ ի բանս խաւարին»[3]: Քրիստոս կատարյալ մարդ էր և կատարելապես նմանվեց մեզ ամեն ինչով՝ մարմնով, հոգով, մտքով, ներքին և արտաքին զգայություններով, բացի սկզբնական և ներգործական մեղքերից[4]: Նա երկրի վրա ունեցավ «անապական մարմինն և հոգին, …աստուածացոյց միութեամբն յարգանդի»[5]: Աստծո մարդեղանալը մարդկային մտքին միշտ անհասանելի է եղել, և Աստծո Խոսքի տնտեսները հաճախ են փորձել այս *խորին խորհուրդ*-ը մեկնաբանել. «Էր Աստուած ճշմարտիւ և եղև մարդ ճշմարտիւ. ոչ ի լինելն մարդ կորոյս զաստուածութիւնն և ոչ ի կալ մնալ Աստուած աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ Նոյն և Մի»[6]: Մարմնացած Աստված երկրի վրա աղքատ ապրեց, անապատ գնաց և հաղթեց սատանային[7]: Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները նրա անձի մեջ միացած են. «զի յաստուածութիւն իւր միացոյց զմարդկութիւնս»[8], «չորեքնիութեայ մարմին և եռամասնեայ հոգին և Բանն միացեալ է»[9]: Բնությունների միության խնդրի շուրջ էր, որ ծագե-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 36բ:

[2] Մանրամասն տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 37:

[3] ՄՄ, ձեռ. 1115, թ. 91ա:

[4] Նույն տեղում, թ. 57բ-58ա:

[5] Նույն տեղում, թ. 117բ, 118բ:

[6] Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին, Վենետիկ, 1864, էջ 64:

[7] ՄՄ, ձեռ. 1115, թ. 11բ:

[8] Նույն տեղում, թ. 36բ:

[9] Նույն տեղում, թ. 121բ:

ցին քրիստոսաբանական վեճերը և Ե դարից ի վեր Եկեղեցին բաժանվեց երկաբնակների և մեկ բնություն ընդունողների: Երկաբնակների դեմ պայքարի ժամանակ է, որ Սահակ Պարթև հայոց կաթողիկոսը գրում է Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքին ուղղված նամակում. «զի ճըշմարիտ մարմին զգեցաւ վասն մեր, և սերմանեաց ի մեզ հաւատով զաստուածութիւնն և արար նշանս և արուեստս, զի նորա աստուածութեամբն հաւատարմասցուք»[1]:

Գրիգոր Տաթևացին, մեկնելով Հոբի՝ «յանկարծ գոյր մեզ միջնորդ» արտահայտությունը, Քրիստոսին ներկայացնում է որպես միջնորդ Հոր և արարածների միջև, ով «հաշտեցոյց զՀայր ընդ արարածս, …հրէից և հեթանոսաց միջնորդ է»[2]:

Լուծմունքում տեղ են գտել Քրիստոսին վերագրվող պատկերավոր արտահայտություններ. «Քրիստոս է անգին մարգարիտ»[3], «Արեգակ արդարութեան»[4]:

Փրկագործություն: Փրկագործությունը մարդեղացած Աստծո՝ խաչի վրա թափված քավչարար արյան միջոցով մեղավոր մարդուն փրկելու, երկինք հասցնելու գործն է: Այն մարդկության վերանորոգումն է իր աստվածակերպ պատկերի մեջ, որը նորոգվեց Քրիստոսով[5]: Անդրադառնալով Քրիստոսի այս կարևորագույն գործին՝ Տաթևացին շեշտում է, որ Քրիստոս մարմին առավ Կույսից, չարչարվեց վեցերորդ օրը և վեց ձևով փրկություն շնորհեց մարդկությանը. ա. փրկեց մեղքերից, բ. փրկեց օրենքի և մեղքի ծառայությունից, գ. փրկեց սատանայի ծառայությունից, դ. փրկեց մահվան ձեռքերից, ե. փրկեց մարդկանց հոգիները դժոխքի տանջանքներից և հանեց բոլոր մեղավորներին և արդարներին, առաքյալի խոսքի համաձայն. «Ել ի բարձրունս Խաչին, գերեաց զգերեալս» (Եփես. Դ 8-9), զ. փրկեց դիվապաշտ մոլորություններից և հավատքի ճշմարիտ աստվածպաշտության ուղուն դրեց, ինչպես Հարությունից հետո Առաքյալներին ուղարկեց հեթանոսների մոտ՝ նրանց պատվիրելով

---

[1] Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան, Ս. Էջմիածին, 1914, էջ 45:

[2] ՄՄ, ձեռ. 1115, թ. 121բ:

[3] Նույն տեղում, թ. 40բ:

[4] Նույն տեղում, թ. 116բ:

[5] Տե՛ս Գարեգին Ա., Աստուածաբանութիւն, հտ. Գ, էջ 133-143:

մկրտել Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, և պահել բոլոր այն պատվիրանները, որոնք տվել էր Քրիստոս. «…ունի զխորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի, նախ՝ զկուսական արգանդին, զի հոգովն ծնանիմք ի կոյս աւազանէն, զմկրտութեանն ի Յորդանան, զի Երրորդութիւնն մկրտիմք և լինիմք շնորհօք որդիք Աստուծոյ»[1]: Սա էր փրկագործության նպատակը, որ Քրիստոսով էր իրագործվելու[2]:

Խաչը Քրիստոսի փառքը և պսակն էր[3], որին շատ են անդրադարձել հայ մատենագրության մեջ[4]: Քրիստոսին քուրձ հագցրին, որպես «ի ծածկոյթ ուխտին Աբրահամու», որը բազում տանջանքների խորհուրդն ուներ, օրինակն էր Ադամի թզենու տերևների և կաշվե զգեստների, որ դրախտից վտարելուց առաջ հագցրեց Աստված[5]: Խաչի վրա Քրիստոսի չարչարանքը «հատուցումն էր մեղացն Ադամայ և ծննդոց նորա», քանի որ Ադամը Աստծո հրամանը զանց առավ և չզղջաց, և մեղքը սերունդներին փոխանցվեց ժառանգաբար, որի համար է ասվում, թե «բառնայր զմեղս աշխարհի» (Հովի. Ա 29): Քրիստոս անմեղ էր, բայց չարչարվեց և որովհետև Աստված էր, նրա չարչարանքներով փրկվեց աշխարհը[6]: Քրիստոս խաչի վրա փակեց աչքերը, որ նշանակում է իր կամքով մեռավ, որովհետև բարձրաձայն աղաղակեց, գլուխը խոնարհեց և փակեց աչքերը: Խաչելության ժամանակ արեգակը խավարեց, որպեսզի արարածները չտեսնեն Տիրոջ մերկությունը[7]: Հայ Առաքելական Եկեղեցում Քրիստոսի չարչարանաց Ավագ Ուրբաթ օրը երգվող շարականներում էլ ենք գտնում սույն միտքը[8]:

---

1 ՄՄ, ձեռ. 1115, թ. 57ա:

2 Նույն տեղում, թ. 17բ-18ա:

3 Նույն տեղում, թ. 117բ:

4 Տե՛ս օրինակ, Դավիթ Անհաղթի Խաչին նվիրված ներբողը. Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932, էջ 9-25:

5 ՄՄ, ձեռ. 1115, թ. 44ա:

6 Նույն տեղում, թ. 48ա:

7 Նույն տեղում, թ. 44ա, 63բ:

8 «Որպէից արեգականն /զտիւն արար գիշերանման, /զստուերն քող արկ մերկութեան, /զի մի տեսցէ ակն անարժան», տե՛ս Շարական հոգեւոր երգոց սուրբ եւ ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց, Կ. Պոլիս, 1853, էջ 304:

Արեգակի խավարումը խորհրդանշում էր հրեաների «կուրությունը», ինչպես ասում է Հովհաննես Ավետարանիչը. «Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան» (Յովհ. Ա 11): Այն նաև «օրենքի խավարումն» էր, որովհետև Քրիստոսով սկսվում է շնորհաց շրջանը, անհավատների կորուստը, արտաքին խավարը, որ պահված է մեղավորների համար[1]: Սրանից հետևում էր, որ Խաչը եղավ այն ճանապարհը, որով մարդ կարողացավ վերստին երկինք բարձրանալ:

Հոբի գրքի լուծմունքում Գրիգոր Տաթևացին Քրիստոսի՝ Խաչի վրա արտասանած խոսքերը մեկնաբանում է «Նորին քարոզ վասն փորձութեանց մեղաց ի բանն Յոբայ, որ ասէ. «Վեցից վշտաց փրկեսցէ զքեզ և յեօթներորդումն ոչ մերձեսցի առ քեզ չար» մեկնողական խոսքում: Խաչի վրա Քրիստոս յոթ խոսք ասաց և յոթ չարից փրկեց մեզ[2]: Առաջին խոսքը, որ ասաց, սա է. **«Հա՛յր, թող սոցա, զի ոչ գիտեն զի՞նչ ասեն»** (Ղուկ. ԻԳ 34), սրանով մարդկանց սովորեցրեց աղոթել թշնամիների համար, այս խոսքերից ժայռերը պատռվեցին, և եթե մարդկանց սրտերը քար են ժայռի նման, այս խոսքերից պետք է պատռվեն և բարի դառնան: Երկրորդ խոսքն է. **«Այսօր ընդ իս իցես ի դրախտին»** (Ղուկ. ԻԳ 43), այս խոսքերը նշանակում են, որ Քրիստոս արքայության է արժանացնում նրանց, ովքեր իր հետ չարչարվում են: Երբ դժոխայինները (չարի կամարարներ, գործակիցներ) լսեցին այս խոսքերը, հետ դարձրեցին այն մարդկանց հոգիները, որոնց զրկել էին: Դժոխայիններից չար են այն մարդիկ, ովքեր չեն վերադարձնում ուրիշներից զրկածն ու հափշտակածը: Ոչ միայն պետք է վերադարձնել զրկածներին, այլև իրենցն էլ բաշխել, ինչպես Քրիստոս ավազակին բաշխեց արքայությունը: Երրորդ խոսքն ասաց իր մորը. **«Ահա որդի քո», և Հովհաննեսին. «Ահա մայր քո»** (Յովհ. ԺԹ 26-27): Սա Քրիստոսի մեծ սիրո դրսևորումն էր իր մոր հանդեպ, որ խաչի չարչարանքների մեջ մորը չէր մոռացել, իսկ մյուս կողմից՝ մեղավոր մարդկության հանդեպ տածած սերն էր, որ ստիպեց նրան չիջնել խաչից մոր համար, այլ ննջեց և գերեզման դրվեց: Այս խոսքերից մեռելները հարություն առան գերեզմանից, իսկ մարդիկ էլ պետք է մեղքերի մոլորությունից հարություն առնեն: Չորրորդ խոսքը. **«Էլի՛, էլի՛, լամա սաբաքթանի. որ է՝ Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս»** (Մարկ. ԺԵ 34-35, հմմտ. Սաղմ. ԻԱ 1): Սա մարդկանց խոնարհու-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 48ա:

[2] Նույն տեղում, թ. 18բ-19բ:

թյուն է սովորեցնում, որ վշտերի և նեղությունների մեջ աղոթեն, և այս խոսքից արեգակը խավարեց: Արեգակն աշխարհի փառքն է ցույց տալիս, և խավարելը՝ նախատինքը, սա մատնանշում է, որ կյանքի վերջում փառքը նախատինքի է փոխվելու, իսկ ուրախությունը՝ տրտմության: Հինգերորդ խոսքը. **«Ծարավի եմ»** (Յովհ. ԺԹ 28), որը երկու բան է սովորեցնում, նախ՝ թեպետ չարչարվեց Քրիստոս, սակայն ծարավ էր մարդկության փրկության և հոժար՝ առավել չարչարվելու, երկրորդ՝ երբ մենք քաղցած կամ ծարավ լինենք, հիշենք Քրիստոսի քաղցն ու ծարավը և մխիթարվենք: Վեցերորդ խոսքը. **«Ամենայն ինչ կատարեալ է»** (Յովհ. ԺԹ 28), այսինքն՝ Քրիստոսի մասին բոլոր մարգարեությունները կատարվեցին, և մարդիկ էլ պարտավոր են մահվան օրը կատարյալ լինել: Այս խոսքերից շարժվեց երկիրը, որը մեզ օրինակ է ամեն ժամ չարից հեռանալ դեպի բարին: Յոթերորդ խոսքը. **«Հայր, ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ»** (Ղուկ. ԻԳ 46). սա սովորեցնում է, որ մարդը պարտավոր է մահվան ժամին հոգին Աստծուն հանձնել: Այս յոթերորդ խոսքից տաճարի վարագույրը պատռվեց, որը սովորեցնում է, որ մահվան օրը պետք է պատռել բոլոր պարտագրերը:

Քրիստոս մեռավ մարդկության մեղքերի համար. «վասն մեղաց մերոց մեռաւ»[1], «չարչարանք Տեառն տրտմութիւն եղև բանսարկուին, …եթող զպարտիս մեր, …ազատեաց մեզ»[2]: Քրիստոս Աստծո Որդի էր և անմեղ էր, բայց մեռավ մարդկանց մեղքերի համար, քավեց մարդկության մեղքերը, իր վրա վերցրեց աշխարհի մեղքը[3]: Երբ Քրիստոս մեռավ խաչի վրա, կողը գեղարդով խոցեցին և նրա կողից արյուն և ջուր ելավ (հմմտ. Յովհ. ԺԹ 34), որը, ըստ Տաթևացու, հինգ նշանակություն ունի. արյունը ցույց էր տալիս, որ կենդանի էր աստվածությամբ, իսկ ջուրը՝ թե մեռած էր մարմնով, արյունը աստվածության խորհուրդն ուներ, ջուրը՝ մարդկության, ջրով սրբվում ենք (նկատի ունի Մկրտության խորհուրդը – Է. Ս.), իսկ արյունը՝ ըմպում (այստեղ էլ նկատի ունի Հաղորդության խորհուրդը – Է. Ս.), ջուրը հանգցրեց Եվայի հուրը, և արյունը կենդանացրեց մեզ, ջրով մկրտվում են հավատացյալները, իսկ արյամբ՝ վկաները[4]: Քրիստոսի մահն իրական էր, քանի որ հոգին բաժանվեց մարմնից,

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 9բ:

[2] Նույն տեղում, թ. 12բ:

[3] Նույն տեղում, թ. 116ա:

[4] ՄՄ, ձեռ. 1115, թ. 43բ-44ա:

իջավ դժոխք, իսկ մարմինը դրվեց գերեզման: Անմահը մեռավ Խաչի վրա, բայց կենդանի էր աստվածությամբ և մահը մեռցրեց, մեռյալներին կենդանացրեց, անապականը գերեզման դրվեց և ապականյալներին հարություն տվեց: Երբ դժոխք իջավ, չէր տանջվում, այլ տանջվողներին էր ազատում, իսկ թշնամուն (նկատի ունի սատանային -Է. Ս.)՝ տանջում: Քրիստոսի մարմինը, որ ապականություն չտեսավ (հմմտ. Գործք Բ 31), երեք գիշեր ու ցերեկ մնաց գերեզմանում՝ երեսուն ժամ, իսկ հոգին երկար մնաց դժոխքում՝ երեսունչորս ժամ[1]: Քրիստոս *անապական մարմնով* հարություն առավ գերեզմանից և նրա օրինակով էլ հավատացյալները անապական մարմնով են հարություն առնելու[2]: Հարության մասին Տաթևացին մեջբերում է Պողոս առաքյալի այն խոսքը, թե նախ Քրիստոս հարություն առավ, որից հետո՝ Երկրորդ Գալստի ժամանակ, *քրիստոսյանները*[3]: Հարությունից հետո Քրիստոս հայտնեց իր անմահությունը, նստեց Հոր աջ կողմում, և նրան երկրպագում են հրեշտակները[4]: Հարությունը բնորոշ է ստեղծվածներից միայն մարդ արարածին:

Քրիստոս էր Արարչի և արարածների միջև միջնորդը, ում շնորհիվ հաշտություն եղավ: Հաշտեցումը Հայ Եկեղեցու փրկագործության կարևոր ասպեկտներից մեկն է: Ինչպես նշում է Եսայի մարգարեն գալիք Մեսիայի մասին՝ «մեծ է իշխանութիւն նորա եւ խաղաղութեան նորա չիք սահման» (Եսայի Թ 7), այնպես էլ Տաթևացին Քրիստոսի հաջորդ մեծագույն գործը համարում է խաղաղություն և հաշտություն բերելը. «հրեշտակաց և մարդկան խաղաղութիւն արար, …մեռելոց և կենդանեաց»[5]:

Սուրբ Հոգի Աստված: Անդրադառնալով Սուրբ Երրորդության երրորդ անձին՝ Սուրբ Հոգուն, Տաթևացին նշում է, որ Նա ճշմարիտ Աստված է, որը հայտնի է դառնում չորս աստվածաշնչյան վկայությամբ. «Նախ՝ Մովսէս ասէ. «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդ. Ա 2), երկրորդ՝ աստ ասէ. «Հոգի աստուածեղէն և արարիչ» (հմմտ. Յովբ ԼԳ 4), զնոյնս և Յոբ ասաց: Երրորդ՝ Աւետարանն ասէ. «Հոգի է Աստուած և երկրպագուացն նորա» (Յովհ. Դ 24), չորրորդ՝ Պետրոս ի Գործքն ասէ.

---

[1] Նույն տեղում, թ. 63բ:

[2] Նույն տեղում, թ. 45բ:

[3] Նույն տեղում, թ. 122ա:

[4] Նույն տեղում, թ. 117ա:

[5] ՄՄ, ձեռ. 1115, թ. 36բ:

«Զի՞ է՝ զի ստեցէր Հոգւոյն, ոչ ստեցէր մարդկան, այլ Աստուծոյ» (Գործք Ե 4): Իսկ Հոգի Տեառն և՛ սուրբ, և՛ բարի»[1]: *Շունչ* և *հոգի* բառերի զուգադրությանը Հոբի գրքում հանդիպում ենք հինգ անգամ՝ Է 15, ԺԲ 10, ԻԷ 3, ԼԲ 8, ԼԳ 4 համարներում (առաջին երեք համարները մտնում են Հոբի խոսքերի մեջ, իսկ մյուս երկուսը՝ Եղիուսի – Է. Ս.), որոնցից առաջին երկուսում օգտագործվում են *ոգի* և *շունչ* եզրերը, իսկ մյուսներում՝ *հոգի* և *շունչ,* որոնցում *ոգի*-ն հավասարազոր է *հոգու*-ն: Ամենայն հավանականությամբ, նկատի ունենալով այս համարները, Տաթևացին նույնացնում է *հոգի*-ն և *շունչ*-ը. «Իսկ որ ասէ *հոգի և շունչ* (նկատի ունի Եղիուսի ճառը - Է. Ս.), նախ՝ միեւնոյն է *հոգի* և *շունչ*, դարձեալ *հոգի* է, որ յինքեան մնայ, և *շունչ*՝ որ արտաքս հեղու: Եւ դարձեալ, *հոգի* գոյացական անձն է, և *շունչ*՝ շնորհօքն եօթնարփեան, վասն որոյ գիրք Աստուածաշունչ կոչեմք»[2]: Փաստորեն, Տաթևացին այդ երկու եզրերը նույնացնում է նաև Սուրբ Հոգու հետ, նախ, որովհետև ամբողջական հատվածը վերնագրել է «Վասն Հոգւոյն Աստուծոյ», երկրորդ՝ Սուրբ Հոգու աստվածությունը հաստատում է Աստվածաշնչյան համարներով, երրորդ՝ *շնորհօքն եօթնարփեան*[3] արտահայտությունը Հայ Եկեղեցու մատենագրության մեջ վերագրվում է միայն Սուրբ Հոգի Աստծուն[4], իսկ Շարականներում և Տաղերում ևս հանդիպում ենք միևնույն ձևակերպումների[5]: Մեկ

---

[1] Նույն տեղում, թ.75աբ:

[2] Նույն տեղում, թ. 75բ:

[3] ՆԲՀԼ-ն բացատրում է. «Արփիափայլ եօթնեակ պայծառութեամբ, եօթնալոյս, եօթնանշոյլ (ըստ եօթնեակ շնորհաց Հոգւոյն), հտ. Ա, էջ 707:

[4] Սուրբ Հոգու շնորհաբաշխության մասին տե՛ս Տեր-Միքելյան Ա., Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը, Սուրբ Էջմիածին, 2007, էջ 253-260, նաև՝ Քեռսէեան Յ., Հայ Եկեղեցու Աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Երևան, 1993, էջ 117-121, 109-131:

[5] «Հրով մաքրողին վեր առաքեմք / Իննաբար երգ ի նա մէտ, / *Եւթնաղի* (նույնն է՝ *եօթնարփի*, տե՛ս ՆԲՀԼ, հտ. Ա, էջ 707) շնորհաց Հոգւոյն Սրբոյ», տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատ.՝ Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 111: «Որք զտաճար հաւատոյ հիմնեցուցին շնորհօք Սուրբ Հոգւոյն, / Յոր եմուտ Բանն Աստուած եօթնարփեան - առագայթիւք…», տե՛ս [Այլ հարց Սրբոց մարգարէից], «Շարական հոգեւոր երգոց Սուրբ և Ուղղափառ Եկեղեց-

ուրիշ տեղում էլ Տաթևացին *եօթնարփեան*-ը վերագրում է Սուրբ Հոգու զորությանը. «եօթնարփեան զորութիւնք Հոգւոյն»[1]: Գրիգոր Տաթևացին Սուրբ Հոգու մասին առավել համակողմանի է ներկայացնում «Գիրք Հարցմանց»-ում[2]:

Մարեմաբանություն: Հոբի գրքի լուծմունքում Գրիգոր Տաթևացին անդրադառնում է նաև մարեմաբանական հարցերին, որոնք Հայ Եկեղեցու դավանաբանական ծիրում սերտորեն կապված են քրիստոսաբանական և փրկաբանական հարցերին[3], քանի որ Մարիամը իր Որդով ստանում է ոչ միայն բարոյական բարձր արժանիք, այլև վարդապետական կարևորություն՝ լինելով միջոց մարդեղությամբ փրկագործության իրականացման[4]:

ւոյս Հայաստանեայց՝ յօրինեալ ի սրբոց Թարգմանչացն մերոց եւ ի սրբոյ Շնորհաւոյն եւ յայլոց սուրբ հարց եւ վարդապետաց», Կ. Պոլիս, 1853, էջ 586: Իսկ Զաքարիա Զագեցին գրում է. «…**Է.** բերան ճրագին է **արփի** շնորհք Հոգւոյն Սրբոյ», տե՛ս Զաքարիա Զագեցի, Ի փոխումն Աստուածամաւրն, կազմ՝ Յ. Քեոսէեան, «Մատենագիրք Հայոց», Թ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 351, («Ճրագի յոթ լեզուները Սուրբ Հոգու յոթնարփյան շնորհներն են» Զաքարիա Զագեցի հայոց հայրապետ և Մովսես Քերթող, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 14):

1 ՄՄ, ձեռ. 1115, թ. 119բ:

2 «…դաւանիմք և խոստովանիմք զՀոգին Սուրբ Աստուած բղխումն ի Հօրէ Աստուծոյ, ըստ այնմ. Հոգին, որ ի Հօրէ ելանէ և առող յՈրդւոյ Աստուծոյ ըստ այնմ. յիմմէ անտի առնուցու: Զի այլ է բղխումն և այլ է առումն: Այսպէս, զի Հոգին բղխումն է ի Հօրէ որպէս Որդին ծնունդ ի Հօրէ: Այլ զի ամենայն ինչ, զոր ունի Հայր Որդւոյ է, և Քրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և իմաստութիւն: Իսկ Հոգին առնու իմաստութեանց և զորութեանց Որդւոյ և բաշխէ արարածոց», տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 65:

3 «…հայ վարդապետութեան ամբողջին մէջ հայ մարեմաբանութիւնը պէտք է քրիստոսաբանութեան մէկ առանձին տետր ըլլայ, կալուած մը, որ փրկագործութեան հետ ալ սերտօրէն կառնչուի», տե՛ս Տասնապետեան Թ., Աստուածածնի բառարան, Պէյրութ, 2000, էջ 39:

4 Տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Հայ Եկեղեցւոյ Աստուածաբանութիւնը ըստ հայ Շարականներու (հայերէն շարք, հտ. Ա), Կանադա, 2003, էջ 227-228:

Տաթևացին լուծմունքի *Վասն լուսոյ* խորագիրը կրող քարոզում Սուրբ Կույսին համեմատում է անկեզ մորենու հետ. «Կոյսն Աստուածածին ինն-ամսեայ զԲանն Աստուած յորովայնին կրեալ, որպէս ետես Մովսէս, զօրինակ մորենին ի հուրն վառեալ և անկէզ մնացեալ»[1]: Սուրբ Կույսի և անկեզ մորենու համեմատությունը կարելի է գտնել աստվածաբանական այլ երկերում, օրինակ՝ Դավիթ Անհաղթը ևս Սուրբ Կույսին նմանեցնում է անկեզ մորենուն, ով «յորովայնի զայդ հուր կրեաց» *անպանելի Հուրը*[2]: Զաքարիա Ձագեցու «Ի փոխումն Աստուածամաւրն» երկում գտնում ենք նույն համեմատությունը. «Մորենի անկիզելի, քանզի ծախիչ հուրն փայլակնատարած լուսով աստուածութեան բնակեցաւ յորովայնի նորա և ոչ բոցակիզեաց»[3]: Տաթևացին *Վասն Աստուածածին Կուսին և գերեզմանին* քարոզում համեմատում է Սուրբ Կույսին Հարության Սուրբ Գերեզմանի հետ. մեկ է Աստվածածին Կույսի և կենսաբեր Սուրբ Գերեզմանի խորհուրդը: Կույս էր Աստվածամայրը, որ իր մեջ կրեց Աստծուն, և կույս էր գերեզմանը, որում ոչ ոք չէր դրվել՝ «նոր էր կոյսն աստուածակիր և նոր էր գերեզմանն աստուածընկալ»: Քրիստոս անապական մարմնով ծնվեց Սուրբ Կույսից (ապականություն չտեսավ երկրային կյանքում) և գերեզմանից հարություն առավ անապական մարմնով:

Երկում Տաթևացին հետևյալ զուգահեռներն է անցկացնում. Քրիստոս գիշերը ծնվեց և գիշերը հարություն առավ: Ծնվելուց հետո Քրիստոս խանձարուրով փաթաթվեց, իսկ գերեզման դրվեց պատանված: Անխախտ մնաց Աստվածամոր կուսությունը, անխախտ մնաց գերեզմանի կնիքը: Քրիստոս քառասուն շաբաթ մնաց Կույսի արգանդում, իսկ գերեզմանում՝ քառասուն ժամ: Կույսն Արքայի դուռն եղավ երկիր իջնելիս, իսկ գերեզմանը դուռ եղավ երկինք բարձրանալիս: Այսպիսով՝ «ընդ Յա-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 91ա:

[2] Տե՛ս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք և թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932, էջ 21:

[3] Տե՛ս Զաքարիա Ձագեցի, Ի փոխումն Աստուածամաւրն, կազմ՝ Յ. Քեոսէեան, «Մատենագիրք Հայոց», Թ հտ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 351, (Եվ դարձյալ անկեզ Մորենի, քանզի սպառող հուրը աստվածության փայլակնատարած լույսով բնակվեց նրա սուրբ որովայնում և չբոցակիզեց» Զաքարիա Ձագեցի հայոց հայրապետ և Մովսես Քերթող, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 13):

րութեան ծնիցելոյն և զՅարութիւն ծնօղին տօնեմք, և զմեծացուսցէ Կուսին ընդ կոյս յարութեանն վերախմբեմք ի փառս և ի գովեստ յարուցելոյն Քրիստոսի»[1]: Մարիամի կուսական սրբությունը Տաթևացին համեմատում է Մկրտության Սուրբ Ավազանի սրբության հետ: Աստվածամայրը համեմատվում է նաև Հին Ուխտի հավատքի նախահայր Աբրահամի հետ: Նրանք երկուսն էլ փոխեցին պատմության ընթացքը՝ անվերապահորեն հավատալով Աստծուն. Աբրահամն եղավ Իսրայել ցեղի նախահայրը և կրոնի հիմնադիրը, իսկ Սուրբ Կույսը «…քրիստոնյաներիս հավերժական մայրը: Աբրահամն զգաց Աստծո գոյությունն իր մեջ: Իսկ Սուրբ Կույսն Աստծո Որդուն մարմնապես կրեց իր արգանդում»[2]: Հայ Եկեղեցին Աստվածածնին համարում է ամենամեծ բարեխոսը, որն իր արտահայտությունն է գտել թե՛ շարականներում, թե՛ ծիսագրքերում և թե՛ աղոթամատյաններում[3]:

Արարչագործություն: Ըստ Հոբի գրքի՝ Գրիգոր Տաթևացու լուծմունքի՝ բոլոր արարածների Արարիչը Սուրբ Երրորդությունն է: Արարչագործությունը նա բացատրում է երեք ձևով. անգոյից ստեղծում է ամեն բան, նորոգում է մեղքից, հարություն է տալիս և փրկում ապականությունից: Սուրբ Երրորդության անձերը արարչագործությանը մասնակցում են՝ Հայրը՝ արարելով, Որդին՝ նորոգելով, Հոգին՝ հարություն տալով[4]: Արարչագործությունը ճանաչելի է երկու ձևով՝ նախ՝ «առնել», երկրորդ՝ «նորոգել», որոնք իրենց հերթին բաժանվում են մասերի՝ «առնել»-ը նախ ստեղծելն է, հետո՝ նախախնամելը, իսկ «նորոգել»-ը՝ նախ՝ մեղքերից, ապա՝ ապականությունից[5]: Հոբ ԻԶ 10 խոսքի մեկնաբանության մեջ կրկին ի հայտ է գալիս Երրորդությունը. «Նախ՝ Հոգին, որ շրջէր ի վերայ ջուրց

---

1 ՄՄ, ձեռ. 1115, թ. 52ա-53ա:

2 Տե՛ս Վաչէ ծ. վրդ. Իգնատիոսեան, Աստվածամայրը, 5-րդ տպ., Երևան, 1993, էջ 12-15:

3 «Աստուածածին անհարսնացեալ զԲանն անսկիզբն յղացար և զԱստուած անիմանալի ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր, նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց», տե՛ս «Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Էջմիածին, 2004, էջ 576:

4 ՄՄ, ձեռ. 1115, թ. 77բ:

5 Նույն տեղում, թ. 58ա:

և պտղածնէր զկենդանիս, երկրորդ՝ ձայն Տեառն ի վերայ ջուրց աւազանին, երրորդ՝ նախախնամութեան Բանն, որ փոխէ ի սառն և ի ձիւն»[1]:

Մեղք: Աստված ամեն բան ստեղծեց կատարյալ, նաև մարդուն, որն արարչագործության պսակն էր. «մարդն գլուխ էր երևելի արարածոց և ի չորս տարերց»[2], սակայն երբ մեղքի պատճառով մարդը ապականվեց, նրա հետ ապականվեցին նաև արարածները. նախ՝ չորս տարերքը, և ապա՝ լուսավորները, որովհետև տարերքից են և երևելի են: Երբ մարդը մեղքի պատճառով դատապարտվեց անեծքով, նրա հետ դատապարտվեցին մյուս արարածները և ապականացու դարձան[3]: Մարդը վտարվեց դրախտից, մահ և անեծք ժառանգեց[4]: Յուրաքանչյուր մարդու մեղքն իր նախնիներից է, այսինքն՝ ժառանգաբար փոխանցվում է. «յանցաւոր եղև Ադամ և ամենայն ծնեալքն ի նմանէ, որպէս արմատ ծառոյ ապականեալ, և ստեղունքն՝ չորացեալ»[5]: Ադամական մեղքը Տաթևացին անվանում է *սկզբնական* մեղք, որը յուրաքանչյուր նոր ծնունդ չորս ձևով է իր մեջ կրում՝ ցանկութիւն, հեշտութիւն, աղտեղութիւն, ապականութիւն, որից առաջինը վերաբերում է հոգուն, երկրորդը՝ հոգուն և մարմնին, երրորդը՝ մարմնին, իսկ չորրորդը՝ գործին[6]: Մեղքն իր բնությամբ մարդու մեջ ի հայտ է գալիս ինչպես ծորձի մեջ ցեցը և ապականում հոգին և մարմինը, այն մարդու մեջ է ծննդից և արտաքին ներգործություններից՝ կամ սատանայից կամ մարդկանցից է ծնվում և ներգործում ծածուկ և խաբեությամբ[7]: Ըստ այդմ էլ՝ Տաթևացին մեղքը բաժանում է երկու մասի՝ սկզբսկզբնական և ներգործական, սկզբնական է, քանի որ ժառանգաբար փոխանցվում է, նորածինը ծնվում է սկզբնական մեղքով, իսկ ներգործականը մեր մեջ է գործում[8]: Մեղքը գործվում է չորս պատճառով՝ սատանայի խաբեությունից, մարմնի տկարությունից, հոգու սխալականությունից, մտքի՝ մեղքի ընկալունակությունից: Գործվելուց հետո մեղքն իր

---

[1] Նույն տեղում, թ. 59ա-59բ:

[2] Նույն տեղում, թ. 57բ:

[3] ՄՄ, ձեռ. 1115, թ. 57բ, 113բ:

[4] Նույն տեղում, թ. 113բ:

[5] Նույն տեղում, թ. 56բ:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, թ. 13բ-14ա:

[8] Նույն տեղում, թ. 41ա:

հետ բերում է ամոթ, երկյուղ, դատաստան, պատուհաս, ինչպես եղավ Ադամի հետ: Քանի որ, ըստ Տաթևացու, մարդու հոգին եռամասնյա է իր կազմությամբ, մեղքը ներգործում է յուրաքանչյուր մասի վրա առանձին-առանձին. «մեղքն է ցանկութեան, երկիւղն՝ ցասման, և ամօթն՝ բանական մասին»[1]:

Թեպետ մեղքերն անթիվ են, Հայ Եկեղեցին դրանցից առանձնացրել է յոթ մեղք, որոնք անվանում է *մահացու*: Լուծմունքում Տաթևացին դրանք կոչում է *գլխավոր* մեղքեր, որոնք սատանան սերմանեց մարդկանց մեջ, երեքը՝ հոգու, չորսը՝ մարմնի: Խոսելով յոթ մահացու մեղքերի մասին՝ Տաթևացին նախ մեղքերի յոթ լինելը կապում է հոգու՝ եռամասնյա և մարմնի՝ քառամասնյա ստեղծված լինելու հետ: Յոթ մահացու մեղքերից երեքը՝ հպարտությունը[2], նախանձը և բարկությունը ապականում են հոգին. իսկ մյուս չորսը՝ ծուլությունը, որկրամոլությունը, ագահությունն ու բղջախոհությունը՝ մարմինը[3]: Մեծ մեղքերին Աստված մեծ պապատիժ է տալիս, իսկ ով ուրիշին է մտածում չարիք գործել, իր իսկ համար արդեն պատրաստ է չարիքը: Երկրի վրա չարիք գործողների համար մարմնական պատիժ է սպասվում, իսկ մահից հետո լինելու է նրանց հոգիների հատուցումը[4]:

Հայ Եկեղեցու խորհուրդները: Հընթացս Տաթևացին խոսում է նաև Եկեղեցու Խորհուրդներից Մկրտության, Ապաշխարության և Հաղորդության մասին: Մկրտությունը Հայ Առաքելական Եկեղեցու առաջին խորհուրդն է, որը մարդուն մաքրում է ադամական մեղքից և հոգևոր վերածնունդ պարգևում: Մկրտվելով *երախան* ընդունում է Սուրբ Հոգին, դառնում մարմին և անդամ Եկեղեցու՝ հագնելով Քրիստոսին: Հայ Եկեղեցու Մկրտության կարգի համաձայն՝ մկրտվողն ընդունում է Երկնավոր Հոր որդեգրությունը, դառնում Քրիստոսի ժառանգակիցը և Սուրբ Հոգու տաճար: Տաթևացին, Հոբի գրքի լուծմունքում տարբեր առիթներով մկրտու-

---

[1] Նույն տեղում, թ. 72բ-73ա: 20բ-ում բերում է հոգու եռամասնյա կազմությունը. «բան, ցասում, ցանկութիւն»:

[2] Մասնավորապես հպարտության մասին շեշտում է, որ այն չարից է, բանսարկուի առաջին ծնունդն է, բանականության խոտորումը: Տե՛ս ՄՄ, ձեռ. 1115, թ. 34ա:

[3] Նույն տեղում, թ. 20բ:

[4] Նույն տեղում, թ. 60բ-61ա:

թյան մասին խոսելով, գրում է, որ Աստված մկրտությամբ, խոստովանությամբ և ապաշխարությամբ սրբում և արդարացնում է մեղքից: Մկրտությունը սրբում է սկզբնական և մնացած բոլոր մեղքերից, խոստովանությունը արդարացնում է[1]: Մկրտության սուրբ ավազանից *անսերմ են ծնվում*[2]: Մկրտությունը *կատարյալ սրբություն* է, հոգևոր և աստվածային ծնունդ, որով հրաժարվում ենք սատանայից և ճաշակում կյանքի պտուղը: Մկրտության ժամանակ դավանում ենք մեր հավատը, սրբվում՝ ջրով և հագնում՝ անապականություն: Հոգով ենք ծնվում կույս ավազանից, որը կուսական արգանդի խորհուրդն է կրում իր մեջ, մկրտվում ենք Սուրբ Երրորդության անունով, շնորհով էլ դառնում Աստծո որդեգիրներ: Այն ունի նաև Խաչի տնօրինական խորհուրդը, որովհետև մկրտվում ենք Քրիստոսի մահվամբ, թաղվում, հարություն առնում և համբարձվում երկինք, որի համար էլ Մկրտությունը կատարյալ սրբություն է[3]: Խոսելով արիոսականների, մակեդոնականների, նեստորականների դարձի մասին՝ նա գրում է, որ նրանց պետք է կրկին մկրտել, իսկ քաղկեդոնականներին չպետք է մկրտել, այլ միայն՝ դրոշմել[4]:

Հաղորդության խորհրդին անդրադառնալով՝ ասում է. «անապական խորհուրդն միշտ պատարագեալ և ի վերայ սրբոյ սեղանոյ անպակաս մնացեալ, որպէս՝ երեսաց հացն և գառն՝ ի հնումն»[5]:

Վախճանաբանություն և դատաստան: Գրիգոր Տաթևացին լուծմունքի *Վասն մահուան* վերնագրում բացատրում է, թե ինչպես երկրային կյանքում չարիք գործողները հանդերձյալ կյանքում կզղջան: Մահվանից հետո ամբարիշտները կզղջան, որ աշխարհը բարի կարծեցին, բայց այն ունայն դուրս եկավ: Մեղավորները երկրային կյանքում չիմացան, որ հանդերձյալ կյանքը բարի է և զրկվեցին դրանից: Նրանք կափսոսեն, որ կարող էին բարիք գործել աշխարհում, բայց չգործեցին: Կփոշմանեն, թե ինչո՞ւ չարիք գործեցին, եթե կարող էին ապրել առանց չարի, ինչպես իրենց բարի ընկերները[6]: Իսկ քրիստոնյաները մահակից են լինում Քրիս-

---

[1] Նույն տեղում, թ. 20բ:

[2] Նույն տեղում, թ. 96ա:

[3] ՄՄ, ձեռ.1115, թ. 57ա:

[4] Նույն տեղում, թ. 96ա:

[5] Նույն տեղում, թ. 120բ:

[6] Նույն տեղում, թ. 51բ-52ա:

տոսին մկրտությամբ, հաղորդությամբ, Խաչի անախտությամբ և իրենց արյամբ[1]: Հանդերձյալ կյանքի երկու բաժանումների մասին Տաթևացին գրում է. «քարանձաւն է կայանք հոգւոցն, ուստի սրբոց հոգիքն ելանեն յերկինս, և մեղաւորացն՝ ի դժոխս»[2]:

Դատելը Աստծո երեք գործերից մեկն է. «առնել, խնամել և դատել» և Հայրն ամեն դատաստան տվել է Որդուն[3]: Աստված դատում է արդարութեամբ[4]: Տաթևացին կարևորում է դատաստանի մասին գիտելիքների իմանալը, որպեսզի թե՛ արդարները, թե՛ մեղավորները զգոն լինեն. արդարները, իմանալով դատաստանի մասին, օրըստօրե արիանան, մեղավորները զղջան և չհուսահատվեն, ծերերը չսիրեն աշխարհը, իսկ հիվանդները խոստովանեն մեղքերը և ողորմություն գտնեն[5]:

Քրիստոնեական առաքինություններ: Լուծմունքում Տաթևացին բազում անգամներ է անդրադառնում քրիստոնեական առաքինություններին և քրիստոնեական կենցաղին: Յոթ առաքինությունները բաժանում է *աստվածայինի*՝ հավատ, հույս, սեր և *մարդկայինի*՝ խոհեմություն, արիություն, ողջախոհություն, արդարություն[6]: Հավատը ճշմարիտ է, եթե գործերն են վկայում, այսինքն՝ այն առանց թերությունների, առանց սխալների և առանց ուրացության է: Սուտ հավատը սոսկ խոսքով է, թերի, սխալ և ուրացող[7]: Տաթևացին հավատի և սիրո փոխհարաբերությունները նմանեցնում է ծաղկի և պտղի հետ, այնուհետ ընդհանրացնում և վերագրում բոլոր առաքինություններին. «Չորս է ծաղիկ և պտուղ հոգևոր. նախ՝ բանն ծաղիկ է, և գործքն՝ պտուղ: Երկրորդ՝ հաւատն ծաղիկ է, և սերն՝ պտուղ: Երրորդ՝ իմացումն ներքին ծաղիկ է, և կատարումն արտաքին՝ պտուղ: Չորրորդ՝ աստ ամենայն առաքինութիւնքն ծաղիկ է, և անդ արդիւնքն՝ պտուղ»[8]: Հավատը, հույսը և սերը կարող են լինել ճշմարիտ և կեղծ, ճշմարիտ են, եթե հոգևոր են և աստվածային,

---

[1] Նույն տեղում, թ. 52ա:

[2] Նույն տեղում, թ. 62բ-63ա:

[3] ՄՄ, ձեռ. 1115, թ. 100բ-101ա:

[4] Նույն տեղում, թ. 87բ:

[5] Նույն տեղում, թ. 78բ:

[6] Նույն տեղում, թ. 24բ-25ա:

[7] Նույն տեղում, թ. 123ա:

[8] Նույն տեղում, թ. 50ա:

կեղծ են, եթե մարմնավոր են, երկրավոր և չար[1]: Առաքինությունների հետ են կապվում նաև Հոբի կողմից կրած տանջանքները, որոնք Տաթևացին խորհրդաբար բաժանում է կրկին յոթի, իսկ յոթը՝ երեքի և չորսի, որոնցից առաջին երեքը բացատրում է որպես որդիների, ծառաների և իր մարմնի կրած հարվածների *բանական* փորձություն, իսկ մյուս չորսը՝ ուղտերի, եզների, էշերի և ոչխարների կորուստը, *անբան* փորձություն: *Բանական փորձությունների* երեք թիվը նա կապում է աստվածային երեք առաքինությունների հետ, իսկ *անբան փորձությունների* չորս թիվը՝ մարդկային չորս առաքինությունների հետ[2]: Բավականին մանրամասն անդրադառնում է խոնարհությանը. այն գովելի է, որովհետև Քրիստոս խոնարհ եղավ և սովորեցրեց իր նման լինել, գեղեցիկ է, բոլոր առաքինությունների զարդն է, բարի գործերի գլուխն է, որովհետև պահքը, աղոթքը և ողորմությունը խոնարհության միջոցով են կատարվում: Բոլոր առաքինությունները սկսվում են խոնարհությունից, որը դեմ է հպարտությանն ու ամբարշտությանը, որոնք չարիքի սկիզբ են, իսկ այն ամենայն բարիքի սկիզբն է, ծնունդ է սիրո, հեզության, մարդասիրության, համբերության, երկայնամտության և քաղցրության[3]:

Աղոթք: Աղոթքը քրիստոնեական կյանքի կենսատու կենցաղավարություն է, որի միջոցով միանում ենք Աստծուն, միացնում մեր կամքը նրա կամքին: «…ամենայն աղոթքի հիմքը պետք է լինի հավատքը. մարդու ամբողջ էությունը պետք է միանա Աստուծո կամքի հետ, և նորա սրտից ճշմարիտ աղոթք բղխի»[4]: Այն «անարյուն բանավոր պատարագ»[5] է: Տաթևացին ճշմարիտ զղջումով, արտասուքով արված աղոթքը զորավոր է համարում, այն կարող է բարձրանալ երկինք և թշնամուն երկիր գլորել նետաձիգի պես[6]: Հորդորում է անդադար աղոթել, հատկապես կիրակի օրը Ս. Պատարագին մասնակցելուց առաջ *ի գիշերին հսկմամբ* աղոթել,

---

[1] Նույն տեղում, թ. 69ա:

[2] ՄՄ, ձեռ. 1115, թ. 19բ-20ա:

[3] Նույն տեղում, թ. 82բ-83բ:

[4] Տե՛ս Տեր-Միքելյան Ա., Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 372-378:

[5] Տե՛ս Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք, Վենետիկ, 1836, էջ 29:

[6] ՄՄ, ձեռ. 1115, թ. 45ա:

որպեսզի հոգին հանգստանա[1]: Քրիստոս սովորեցրեց աղոթել թշնամիների համար[2]: Ճշմարիտ աղոթողի միտքը լուսավորվում է, ազատվում աշխարհային մտածումներից, չի երկնչում, նրա տրտմությունը լուսավորվում է, հաստատվում է հույսը, հոգսը՝ վերանում, սրբերի ջերմեռանդ աղոթքից թշնամին այրվում է և վախենում մոտենալ նրանց[3]:

Տիպաբանական մեկնություններ: Հին Կտակարանի գրքերը մեկնելիս հեղինակները որոշ անձերի (նաև՝ իրերի) անվանումներում, արարքներում, խոսքերում խորհրդաբանորեն տեսնում են Քրիստոսին: Նման դեպքերում սովորաբար ասում են. «Հոբը (Ադամը, Աբրահամը, Մովսեսը, պղնձե օձը և այլն) Քրիստոսի տիպը (հուն.՝ τύπος) կամ ստվերն է Հին Ուխտում»: Տաթևացին իր լուծմունքում Քրիստոսի ստվերն է համարում Ադամին և Հոբին[4]: Մարմնացյալ Աստված՝ Քրիստոս, ծածկապես ուներ Ադամի մինչմեղանչական կերպարանքը և իր մեջ կրում էր նաև մեղանչելուց հետո եղած կիրքը, առավել էր Ադամից, որ երևում է նրա կատարած հրաշքներով, իսկ Ադամն Աստված չէր, ոչ էլ անմահ, ինչպես՝ Քրիստոս: Ադամն ուներ անեծքի դատակնիքը, իսկ Քրիստոս քանդում է այն: Քրիստոսի շնորհներով մարդն ազատագրվում է Ադամի մեղքի պարտքից[5]: Մարգարեներից առավել է Քրիստոս հետևյալ պատճառներով. նախ, որ Կույսից ծնվեց, երկրորդ՝ մարգարեները մարգարեացան, իսկ Քրիստոս գործով կատարեց, իրականացրեց մարգարեությունները, երրորդ՝ նրանցից յուրաքանչյուրը հրաշքներ արեց, մեկը՝ ծովը բացեց, մյուսը՝ երկինք բարձրացավ, երրորդն էլ մեռյալին հարություն տվեց և այլն, իսկ Քրիստոս ամեն բան կատարեց[6]: Հոբի մասին՝ որպես Քրիստոսի ստվեր, Տաթևացին նշում է, որ «բազում իրոք օրինակէր Յոբ Քրիստոսի»: Զարգացնելով իր միտքը՝ զուգահեռներ է անցկացնում Քրիստոսի եռակի ծառայությունների՝ մարգարեության, թագավորու-

---

[1] Նույն տեղում, թ. 21բ:

[2] Նույն տեղում, թ. 18բ:

[3] ՄՄ, ձեռ. 1115, թ. 38ա-39ա:

[4] Իսկ Վանական Վարդապետը Հոբին համարում է Ադամի և Քրիստոսի ստվերը, տե՛ս նաև Sargisean Basilio, Dei tesori Patristici e Biblici, Conservati nella Letteratura Armena, Venezia, Tipografia di St. Lazzaro, 1897, p. 46-48:

[5] ՄՄ, ձեռ. 1115, թ. 117ա:

[6] Նույն տեղում, թ. 90ա:

թյան, քահանայության և Հոբի կյանքի միջև: Հոբը նման եղավ Քրիստոսին. ինչպես Քրիստոս աղոթեց իրեն խաչողների համար, այնպես էլ Հոբն աղոթեց իրեն դատապարտող բարեկամների համար: Նահապետը խոյ և զվարակ էր զոհաբերում, իսկ Քրիստոս ինքը պատարագի զոհը եղավ: Հոբը վշտացավ և չարչարանքներ կրեց, նույնպես Քրիստոս աշխարհի համար չարչարվեց և տառապանք կրեց: Երանելու համբերության մասին լսեցին ազգերը և նրա մոտ եկան, նույն կերպ բոլոր ազգերը լսեցին Քրիստոսի հրաշքների մասին: Ինչպես Հոբի մոտ բոլոր եղբայրներն ու բարեկամները կերան և խմեցին, նվերներ բերեցին, այնպես էլ Վերնատանը առաքյալները Տիրոջ մարմինն ու արյունը ճաշակեցին[1]: Այս զուգահեռների մասին Տաթևացին լրացուցիչ մանրամասներ է ներկայացնում «Գիրք Հարցմանց»-ում[2]: Ինչպես Աստված երեք անգամ վկայեց Հոբի արդարության մասին՝ երկուսը՝ մինչև փորձությունը, մեկը՝ ամպի և մեգի միջից, այնպես էլ Աստված երեք անգամ վկայեց Քրիստոսի մասին (մկրտության (Մատթ. Գ 17), այլակերպության (Մատթ. ԺԷ 5), Երուսաղեմ հաղթական մուտքի ժամանակ (Յովհ. ԺԲ 28) -Է. Ս.), նաև Քրիստոսի մասին վկայում են հոգին, արյունը և ջուրը (Ա Յովհ. Ե 8):

Տառապանքի խնդիրը: Քրիստոնեական վարդապետության սկզբունքային խնդիրներից մեկն էլ արդարի կյանքում չարի կողմից պատահող չարչարանքի, տառապանքի հարցն է: Այս խնդիրը հաճախ է արծարծվել թե՛ աստվածաբանական և թե՛ փիլիսոփայական երկերում: ԺԷ դարից արդեն փիլիսոփայության մեջ այս հարցերն ի հայտ է գալիս *թեոդիցիա* տերմինով, որը բառացի բացատրվում է որպես Աստծո արդարացում:

Հոբի չարչարանքների յուրաքանչյուր դրվագ Տաթևացին շեշտում և յուրովի է ներկայացնում: Նրան անվանում է «հայրն համբերութեան և քաջ նահատակն ճգնողութեան երանելի Յոբ»[3], մեկ այլ տեղում՝ «քաջ զօրավարն հաւատոյ և անկեղծաւոր իմաստասէր մարգարէն Յոբ»[4]: Ըստ Տաթևացու՝ մարդը պետք է միշտ պատրաստ լինի փորձություններին, քանի որ մարդը չգիտի, թե թշնամին երբ է նրա դեմ մարտնչելու: Ի-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 118բ:

[2] Տե՛ս Գիրք Հարցմանց, էջ 327:

[3] ՄՄ, ձեռ. 1115, թ. 14բ:

[4] Նույն տեղում, թ. 23ա:

նչպես Աբրահամը փորձության ժամանակ ասաց. «Ահաւասիկ եմ, Տէ՛ր», այնպես էլ Հոբն էր մարտի պատրաստ, երբ սատանան Աստծուց թույլտվություն ստացավ փորձել Հոբին[1]: Թե ինչո՞ւ Աստված արդար Հոբին չարչարանքներ տվեց, Տաթևացին բացատրում է այսպես. նախ՝ որպեսզի մարդիկ ևս իմանան Հոբի արդարության և ծածուկ համբերության մասին, նրա վարձքն առավել լինի, նրանից խոնարհություն սովորեն: Ինչպես Քրիստոս անմեղությամբ դատապարտվեց և իր ծննդյամբ նախաստեղծի փառքը ցույց տվեց, այնպես էլ՝ Հոբը[2]: Դա թույլ տրվեց այն պատճառով, որ սատանան ամոթահար լիներ, երբ պարտություն կրեր Աստծուց: Աստված այսպես վարվեց, որպեսզի մարդիկ չկարծեն, թե Հոբը տկար էր, և Աստված չսիրեց նրան: Ինչպես Քրիստոս մահվան դատապարտվեց և հաղթեց սատանային, այնպես էլ՝ Հոբը[3]: Աստված սատանային չթողեց, որ մոտենա Արդարի հոգուն, որովհետև «զի թէ զմիտքն, և զկամքն, և զխորհուրդն կորուսեալ էր զՅոբայ, յայնժամ դիւրապէս յաղթէր զսատանայ»: Չարն, ըստ Տաթևացու, չէր կարող մոտենալ մարդու հոգուն, քանի որ «հրաման է աստուածային սահմանեալ», և եթե նա մարդկանց հոգիներին մոտենար, ապա ամենքի հոգին կկործաներ, քանզի հոգին «անապական է բնութեամբ և ի պատկերն Աստուծոյ»[4]: Սուրբ Գիրքն ասում է. *նստէր յաղբեւս* (Յոբ Բ 8), Տաթևացին այս միտքը մեկնաբանում է և՛ այլաբանորեն, և՛ բառացի մեթոդով: Ըստ այլաբանական մեկնության՝ *աղբիւսը* (աղբ - Է. Ս.) մարմինն է, որ շուտափոյթ գնում է դեպի աղբը (հողը – «Հող էիր և ի հող դարձցիս» (Ծնն. Գ 20) - Է. Ս.): Հոբն այնքան խոնարհվեց իր թագավորական աթոռից, որ ընկավ աղբի մեջ, որովհետև մարմնով հիշեցնում է մեր հողեղեն բնությունը: Եթե սատանան ցանկացավ իր աթոռը բարձրացնել և Աստծուն հավասար դնել, բայց երկիր շպրտվեց, ապա Հոբը խոնարհվեց և երկինք բարձրացավ:

Հոբն ուներ նաև Ադամի խորհուրդը. ինչպես Ադամը դրախտից ընկավ փշաբեր երկիր, այնպես էլ Հոբն ընկավ աղբի մեջ: Հոբը խորհուրդն էր այն ցորենի հատիկի, որը պիտի ընկներ հողում, որպեսզի պտուղ

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 23ա:

[2] Նույն տեղում, թ. 10բ:

[3] Նույն տեղում, թ. 15աբ:

[4] Նույն տեղում, թ. 15բ:

տար: Ըստ բառացի մեկնության՝ Հոբի մարմինն այնքան էր սպիերով և թարախապատ վերքերով պատված, որ նա չէր կարող ոտքի կանգնել, ուստի նստել էր փողոցում, աղբի մոտ, որը գտնվում էր քաղաքի դարպասներից դուրս[1]: Նա ամբողջովին վերքերով էր պատված, որպեսզի ամբողջ մարմինը Աստված *փառքով պսակի*, և մարմնի բոլոր անդամներով հաղթի սատանային[2]: Սակայն այս բոլոր տանջանքներից հետո Հոբը հաղթեց սատանային պատերազմում, որովհետև *զինված* էր համբերությամբ, հեզությամբ և գոհությամբ: Հարստության կորուստը գոհությամբ տարավ, որդիների մահն էլ իբրև պատարագ մատուցեց Աստծուն, աստվածապաշտության մեջ հաստատուն էր, չէր երկնչում երևելի և աներևույթ թշնամիներից և փորձությունների ընթացքում նստում էր քաղաքից դուրս: Նա անարգեց սատանային և իր բարեկամներին, ովքեր գործակից էին սատանային: Հոբն ամեն բան խաղաղությամբ տարավ[3]:

Երանելու փորձությունները Տաթևացին կրկին բաժանում է յոթի, որն իր հերթին բաժանում է երկուսի. «չորսն անբան կենդանեօք և երեքն՝ բանական»: *Անբան* կենդանիների շարքում նա թվում է ուղտերին, եզներին, էշերին և ոչխարներին, իսկ *բանական* կենդանիների շարքում՝ որդիներին, ծառաներին և իր մարմնի հարվածները[4] (ինչպես վերևում նշեցինք, սրանք Տաթևացին մեկնաբանել էր՝ կապելով առաքինություններին): Թե որքան ժամանակ տևեցին Հոբի տանջանքները, Հոբի գրքում չի ասվում, որպեսզի նրանք, ովքեր փորձության մեջ են, չծուլանան, չհուսահատվեն և չվհատվեն, այլ համբերությամբ սպասեն փրկությանը, և ինչպես Համբերության Հայրը հաղթանակ տարավ հարվածների և աղտերի հանդեպ և առավել եղավ, քան ժամանակը, այնպես էլ փորձություն կրողները հավատան, որ նույն Աստված, որն օգնեց Հոբին, կարող է մարդկանց օգնել և փրկել[5]: Հոբը բարությամբ հաղթեց չարին, ինչպես լույսն է հաղթում խավարին[6]: Երանելին բոլոր չարչարանքները համբերությամբ տարավ, արժանացավ Աստծո ողորմությանը, հաղթեց փորձողին, առողջացավ, հարստություն և զավակներ կրկին ձեռք բերեց, աղո-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 16ա:

[2] Նույն տեղում, թ. 15ա:

[3] Նույն տեղում, թ. 17ա:

[4] Նույն տեղում, թ. 19բ:

[5] Նույն տեղում, թ. 16բ:

[6] Նույն տեղում, թ. 102ա:

թեց և զոհ մատուցեց իր բարեկամների համար, և նրանք բժշկվեցին, որով Տաթևացին շեշտում է Հոբի քահանայությունը և նշում, որ նրա քահանայությունը ղևտական քահանայությունից առաջ էր[1]:

Հայ գրականության մեջ Հոբի համբերության և արդարության օրինակը ներշնչանքի աղբյուր է հանդիսացել[2]:

Ընդդեմ հերձվածողների: Քրիստոսի Եկեղեցին ընդհանրապես և Հայ Եկեղեցին մասնավորապես իրենց հիմնավորման օրերից միշտ մարտնչել են հերձվածողական և հերետիկոսական տարբեր հոսանքների դեմ: Քաղկեդոնի ժողովից (451 թ.) հետո Հայ Եկեղեցին, իր ուղղափառ դավանությունն անաղարտ ու անխաթար պահելու համար, ստիպված է եղել դավանաբանական պայքար մղել նաև քրիստոնեական եկեղեցիների ճնշումների դեմ: Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսը, անդրադառնալով Քաղկեդոնից հետո առաջացած վեճերին, տարանջատում է այն գլխավոր կետերը, որոնց պատճառով Հայ Եկեղեցին մերժեց Քաղկեդոնի որոշումները և նշում. «Հայ աստուածաբանները հիմնականում զբաղուած են եղել Քաղկեդոնի քրիստոսաբանութեան քննադատութեամբ, շեշտելով Քրիստոսի բնութիւնների իրական միութիւնը, և միաժամանակ, անխոնջ կերպով զգուշանալով Նրա մեջ շփոթի և անկատարութեան որևէ գաղափարից»[3]: Այս բախումների ընթացքում Հայ Եկեղեցու դավանաբանության ծիրում ձևավորված քրիստոսաբանական ձևակերպումները, անցնելով պատմական զարգացման ուղի, մեր կարծիքով, վերջնականապես իրենց բանաձևումներն են գտնում Տաթևացու մոտ, որն իր արտահայտությունն է գտել անգամ Հոբի գրքի լուծմունքում:

Այս գրվածքում Տաթևացին անդրադառնում է նաև Եկեղեցին իր ծագումից ի վեր փոթորկող զանազան, մասնավորապես, քաղկեդոնականությունից ծագած այլախոհությունների (հուն. αἵρεσις): Նա տարանջա-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 115բ-116ա:

[2] Ինչպես օրինակ՝ «Մի՛ տար զիս ի փորձութիւն, ես *Յոբըն* չեմ, որ դիմանամ» (Հովհաննէս Թլկուրանցի, Աղոթք), տե՛ս Պողարեան եպս. Ն., նշվ. աշխ., էջ 389: «Հայցեմ ի քէն զանձն իմ փորձութիւն, / Եվ թէ տացես, տուր ըստ *Յոբայ* համբերութիւն, / Տուր ինձ առ բանս քոյինաշունչս զտենչ և ջան, / Եվ զոր սկսայց, հանգոյն *Յոբայ* ած ի վախճան» (Պետրոս արք. Աղամալեան-Բերդումեան Նախիջևանցի, Աղոթք առ Տէր և շնորհակալություն), տե՛ս ՄՄ, ձեռ. 1174, թ. 89բ:

[3] Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Քաղկեդոնի ժողովը և Հայոց Եկեղեցին (հայերէն շարք, հտ. Ը), Նիւ Եորք, Լոնտոն, 2012, էջ 24-25:

տում է *հերետիկոս* և *հերձվածող* եզրերը. *հերետիկոս*-ը նա է, ով հայհոյում է Աստծուն, իսկ *հերձվածող*-ը՝ Եկեղեցին ու Խաչը[1]: Անդրադառնում է նաև հերձվածողների կողմից առաջ քաշած խնդիրներին. «զի աստուածական զօրութիւն ասէ Խաչին, զի Աստուած էր խաչեալն, և նա է զօրութիւն աստուածընկալ Խաչին. ընդդէմ է Նեստորի մարդադաւանի և երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի»[2]: Անդրադառնալով Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների բաժանման՝ նեստորականության և քաղկեդոնականության դավանաբանությանը՝ գրում է. «Նոյնպէս և ի տնօրէնութիւնն Քրիստոսի ոչ գիտեն զմիաւորութիւնն անբաժանելի, որպէս Նեստոր և քաղկեդոնիք, զի ոմանք երկու բնութեանս բաժանեն, և ոմանք՝ երկու անձինք, և երկու կամք և երկու գործք, զոր Բանն Աստուած միաւորեաց զբնութիւնս մեր ընդ իւրում աստուածութեանն, նոքա բաժանեն, զի բաժանեսցին ինքեանք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Եւ առաքեալ մի՛ Տէր, մի՛ Քրիստոս, մի՛ Որդի խոստովանի (հմմտ. Ա Կորնթ. Ը 6, Գաղ. Գ 20, Եփես. Դ 5-6, Ա Տիմ. Բ 5) և նոքա յերկուս որոշեն»[3]: Հեթանոսները, հերձվածողները՝ արիոսականներն ու սաբելականները և նրանց նմանները, կարդալով Սուրբ Գիրքը, չեն ըմբռնում, որ Աստված «երից անձանցն է և որ՝ միոյ բնութեան»[4]: Թե ինչո՞ւ են հերձվածողների գաղափարները մեծ տարածում գտնում, Տաթևացին ասում է, որ նրանց գաղափարները հեշտությամբ գերում են նրանց, ովքեր պարզամիտ են, մանուկ են մտքով (այսինքն՝ տհաս - Է. Ս.), նման մարդիկ ընկնում են, կոտորվում են հերձվածողների *խոսքի սրից*՝ սովորելով նրանց չար գաղափարները[5]: Տաթևացին, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով ունիթորական միաբանների՝ մարդկանց Հայ Եկեղեցու ճշմարիտ հավատքից հեռացնելու փորձերը, խորհուրդ է տալիս տարբերել ուղղափառներին չարափառներից. նախ նայել Սուրբ Գրքի վկայություններին, ապա՝ նրանց գործերին, իսկ հետո նշում, որ լսողների հոգիներն էլ կարող են վկայել, թե որն է ճշմարիտը, որը՝ սուտը և հերձվածը[6]: Հերձվա-

---

[1] ՄՄ, ձեռ. 1115, թ. 11բ:

[2] Նույն տեղում, թ. 90բ:

[3] Նույն տեղում, թ. 24աբ:

[4] Նույն տեղում: Ավելի մանրամասն տե՛ս նաև Տեր-Միքելյան Ա., նշվ. աշխ., էջ 175-184:

[5] Նույն տեղում, թ. 24բ:

[6] ՄՄ, ձեռ. 1115, թ. 109ա:

ծողների և հերետիկոսների մասին օրինակ ունենք նաև մկրտության խորհրդի վերլուծության մեջ:

Հոբի գրքի լուծմունքում Տաթևացին անդրադառնում է նաև՝ հրեշտակաբանության, արարածների ապականության և ազատության, սատանայի և այլ խնդիրների:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԼՈՒԾՄՈՒՆՔ ՅՈԲԱՅ» ԵՐԿՈՒՄ ԱՌԿԱ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Էլյա Սարիբեկյան

Բանալի բառեր *- Գրիգոր Տաթևացի, Հոբ, լուծմունք, թեոդիցիա, քրիստոսաբանություն, երրորդաբանություն, վախճանաբանություն, մարեմաբանություն:*

Հոբի գրքի լուծմունքը Գրիգոր Տաթևացին գրել է Մեծոփա վանքում դասավանդելու տարիներին՝ 1408 թ.: Այն անտիպ է և մեզ է հասել յոթնալույս վարդապետի ինքնագրով: Վերլուծելով հինկտակարանյան Հոբի գիրքը՝ Տաթևացին կարողանում է դրա մեջ տեսնել և վերհանել քրիստոնեության հիմնարար դրույթները և անդրադառնալ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության կարևորագույն սկզբունքներին: Սույն երկում աստվածաբանական դրույթները համակարգված չեն, այլ սփռված են լուծմունքի ողջ թերթերում, որի պատճառով էլ աստվածաբանական մեկ խնդրի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է ողջ գրքից ի մի բերել հատակոտորները: Գրիգոր Տաթևացին անդրադառնում է այնպիսի կարևորագույն խնդիրների, ինչպիսիք են արարչաբանությունը, երրորդաբանությունը, քրիստոսաբանությունը, Սուրբ Հոգին, մարեմաբանությունը, վախճանաբանությունը, թեոդիցիան և այլն: Այս խնդիրների մասին խոսելիս հարկ ենք համարել անդրադառնալ Հայրերի մատենագրական ժառանգությանը և Գրիգոր Տաթևացու մյուս երկերին:

БОГОСЛОВСКИЕ ВОПРОСЫ В "КОММЕНТАРИИ НА КНИГУ ИОВА" ГРИГОРА ТАТЕВАЦИ

Эля Сарибекян

Ключевые слова *- Григор Татеваци, Иов, толкование, Теодицея, Христология, учение о Святой Троице, эсхатология, мариология.*

Толкование книги Иова Григор Татеваци написал в 1408 году во время преподавания в монастыре Мецопаванк. Сие не напечатано и до нас дошла

рукопись самого святого учителя. Анализируя ветхозаветную книгу Иова, Татеваци смог в нем увидеть и раскрыть основные положения христианства, обратиться к важнейшим принципам учения Армянской Апостольской церкви. В этом произведении богословские положения не систематизированы, а рассеяны по всем страницам толкования. Именно поэтому для полноценного понимания одной богословской задачи, необходимо рассмотреть всю книгу. Григор Татеваци обращается к таким важным вопросам, какими являются учение о Сотворении (Шестоднев), учение о Святой Троице, Христология, Святой Дух, Мариология, эсхатология, Теодицея и др. Говоря об указанных вопросах, считали нужным обратиться к библиографическому наследию духовных Отцов и к другим произведениям Григора Татеваци.

THE THEOLOGICAL ISSUES OF THE GRIGOR TATEVATSI'S "COMMENTARY TO THE BOOK OF JOB"

Elya Saribekyan

Keywords: *Grigor Tatevatsi, Job, commentary, theodicy, Christology, the Trinity, eschatology, Mariology.*

Grigor Tatevatsi wrote the commentary to the Book of Job during the years of his teaching in Metsopavank in 1408. This unique manuscript was written by the eminent doctor of the church.

Through his analysis of the Book of Job, Grigor Tatevatsi managed to see in it and reveal the fundamental aspects of Christianity, and address the significant principles of doctrine of the Armenian Apostolic Church.

In this writing the theological aspects are nor systematized but are rather extended over the whole contents of the book. Consequently, in order to obtain a complete idea of one theological issue one has to look through separate passages. Grigor Tatevatsi addresses such significant issues as creation, the doctrine of the Trinity, Christology, Holy Spirit, Mariology, Eschatology, Theodicy etc. In our analysis of the above mentioned issues we have considered it important to refer to the literary heritage of some Fathers and Grigor Tatevatsi's other writings.